ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հուլիսի 2025թ. թիվ 320-Ա

Ռ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ. դեկտեմբերի 14-ի թիվ 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 17-ի՝ ՀՀ Լոռու մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 287 արձանագրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Ռիտա Ցաշայի Հարությունյանին 2025 թվականի հուլիսի 7-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Ռիտա Հարությունյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

04/07/2025

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. հուլիսի 4
ք.Վանաձոր